

**Գրանցված է**

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկում

«02» դեկտեմբերի 2008թ.

Նախագահ՝ Արթուր Զավադյան

Նոր խմբագրությամբ գրանցվել է 22.12.2009թ.

Փոփոխությունները և լրացումները գրանցվել են

19.05.2011թ.

22.08.2011թ.

09.11.2011թ.

Նոր խմբագրությամբ գրանցվել է

06.02.2013թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Գլուխ 1. Կանոնների կարգավորման առարկան

1. Սույն կանոնները սահմանում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Կենտրոնական դեպոզիտարիա) կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված գործառույթների շրջանակներում, Համակարգի միջոցով մատուցվող ծառայությունների սակագները:

### Գլուխ 2. Կանոնների կիրառման ոլորտը

2. Սույն կանոնների պահանջները կիրառվում են այն թողարկողների, հաշվետերերի, Համակարգի անդամների և այլ անձանց նկատմամբ, ովքեր Օրենքով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով օգտվում են սույն կանոններով սահմանված ծառայություններից:

### Գլուխ 3. Կանոններում օգտագործվող հիմնական հասացությունները

3. Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝
  - 1) «ՀՀ դրամ». Հայաստանի Հանրապետության դրամ.
  - 2) «սակագին». սույն կանոններով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված համապատասխան ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով կամ ՀՀ դրամով.

- 3) «**ծառայության արժեք**» Համակարգի անդամի կողմից թողարկողին և հաշվետերերին ծառայությունների մատուցման համար իր կողմից հաշվարկված և իրեն հասանելիք գումար.
  - 4) «**ծառայության գին**» սակագնի և ծառայության արժեքի հանրագումարը: Սույն կանոններով սահմանված դեպքերում այն կարող է փոքր լինել սակագնից:
4. Սույն կանոններում կիրառվող այլ հասկացությունները ունեն Օրենքով և Կենտրոնական դեպոզիտարիայի այլ կանոններով սահմանված նշանակությունները:

#### **Գլուխ 4. Ծառայությունների դիմաց վճարվող դրամական միավորը**

5. Սույն կանոններով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումը իրականացվում է ՀՀ դրամով:
6. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

#### **Գլուխ 5. Ծառայությունների դիմաց վճարման կարգը**

7. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է անկանխիկ ձևով (փոխանցումով) մինչև Օրենքով, այլ իրավական ակտերով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով ծառայություններից օգտվելու համար Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով ներկայացված համապատասխան փաստաթղթերը հաշվի օպերատորին կամ վերջինիս միջնորդությամբ կամ առանց միջնորդության Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացնելը (հանձնարարագիրը/հարցումը էլեկտրոնային ձևով փոխանցելուց առաջ), բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել են վճարման երաշխիքներ, վճարման երաշխիքն ամրագրված է վճարողի և Կենտրոնական դեպոզիտարիայի կամ Հաշվի օպերատորի միջև կնքված պայմանագրով՝ մինչև որոշակի ժամկետի ավարտը ծառայության մատուցման դիմաց սույն կանոններով սահմանված չափով վճարումը կատարելու վերաբերյալ, կամ վճարողը Համակարգի անդամ է: Ընդ որում պայմանագրային դրույթներով ամրագրված երաշխիքները հիմք են, որպեսզի վճարողը՝ որպես թողարկող, հաշվետեր, անվանատեր, Համակարգի անդամ կամ այլ կարգավիճակով հանդես գալու դեպքում, Կենտրոնական դեպոզիտարիայի բոլոր ծառայություններից օգտվելու դիմաց վճարումներն իրականացնի Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած համապատասխան պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

8. Այն դեպքում, երբ սույն կանոնների ուժի մեջ մտնելուց հետո Թողարկողը հաշվի օպերատորի միջնորդությամբ կնքել է կամ վերակնքել է ռեեստրի վարման պայմանագիրը, սույն կանոններով սահմանված ծառայության գինը թողարկողը պարտավոր է վճարել Հաշվի օպերատորին:
9. Համակարգի անդամը թողարկողին և հաշվետերերին մատուցվող ծառայությունների համար սույն կանոններով սահմանված (այդ թվում՝ անվճար սահմանված) սակագներին հավելելով նաև իր կողմից մատուցվող ծառայությունների արժեքը, ձևավորում է ծառայության գինը: Ծառայության գինը ամբողջությամբ գանձվում է Համակարգի անդամի կողմից: Համակարգի անդամը, անկախ իր կողմից ծառայության գինը գանձելու հանգամանքից, պարտավոր է սույն կանոններով նախատեսված սակագինը սույն կանոններով սահմանված ժամկետներում վճարել Կենտրոնական դեպոզիտարիային: Համակարգի անդամը իրավունք ունի նաև բոլոր կամ մի քանի սակագներին չհավելել իր կողմից մատուցվող ծառայությունների արժեք, ավելին՝ ծառայության գինը սահմանել ավելի ցածր քան սակագինն է: Նման դեպքերում ևս, Համակարգի անդամը պարտավոր է սույն կանոններով սահմանված ժամկետներում մատուցված ծառայությունների սակագինը վճարել Կենտրոնական դեպոզիտարիային: Վերը նշված բոլոր դեպքերում ծառայության գինը հաճախորդի կողմից ամբողջությամբ վճարվում է Համակարգի անդամին: Համակարգի անդամը պարտավոր է ծառայությունների գները հրապարակել իր ինտերնետային կայքում, ինչպես նաև ծառայությունների մատուցման իր վայրերում հասանելի դարձնել հաճախորդներին: Ծառայությունների արժեքները համարվում են Համակարգի անդամի սեփականությունը և Կենտրոնական դեպոզիտարիային վճարման ենթակա չեն:
10. Համակարգի անդամը մինչև համապատասխան միջնորդավորված ծառայության մատուցումը, պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացնել իր կողմից սահմանված ծառայությունների արժեքների չափերը, որոնք Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից անմիջապես ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով ուղարկվում են ՀՀ կենտրոնական բանկի իրավասու աշխատակցին: Մինչև հաջորդ աշխատանքային օրը ՀՀ կենտրոնական բանկից ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով առարկություն չստանալու կամ չառարկելու մասին գրավոր տեղեկացում ստանալու դեպքում, Կենտրոնական դեպոզիտարիան ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով այդ մասին տեղեկացնում է համապատասխան Համակարգի անդամին, որի դեպքում սակագինը ուժի մեջ է մտնում տեղեկացնելու օրվան հաջորդող 15-րդ օրը, եթե առանձին դեպքերում սակագնով դրա ուժի մեջ մտնելու այլ ժամկետ սահմանված չէ:
11. Կենտրոնական դեպոզիտարիան մինչև հաշվետու ամսվանը հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը ներառյալ հաշիվ է ներկայացնում Համակարգի անդամներին նրանց միջնորդությամբ սպասարկվող անձանց, այդ թվում թողարկողներին և հաշվետերերին մատուցված ծառայությունների ծավալին համապատասխան: Համակարգի անդամը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հաշիվը ներկայացնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում վճարել իր

կողմից միջնորդավորված ծառայությունների համար հաշվում ներառված գումարի ամբողջ ծավալով:

12. Հաշվի օպերատորի կամ կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակի շնորհման համար սահմանված սակագները Համակարգի անդամի կողմից վճարվում են համապատասխան փաստաթղթերը Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացնելու պահին, իսկ սպասարկման ամսական անդամավճարների վճարումը իրականացվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-րդ աշխատանքային օրը: Ընդ որում, եթե Համակարգի անդամը ցանկություն է հայտնել ստանալ միաժամանակ և հաշվի օպերատորի, և կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակ, ապա վերջինս պարտավոր է վճարել սույն կանոններով սահմանված յուրաքանչյուր կարգավիճակի շնորհման և սպասարկման համար սահմանված սակագները առանձին:
13. Համակարգի անդամի կողմից սույն կանոնների 11 և 12 կետերով սահմանված ժամկետներում նախատեսված վճարների չկատարման կամ ուշացման դեպքում Կենտրոնական Դեպոզիտարիան Համակարգի անդամի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15%-ի չափով:
14. Այն դեպքում, երբ սույն կանոններն ուժի մեջ մտնելուց հետո թողարկողը հաշվի օպերատորի միջնորդությամբ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ չի վերակնքում ռեեստրի վարման պայմանագիրը, ապա Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից թողարկողին մատուցվում են միայն սույն կանոնների 24.2 և 24.3 կետերով սահմանված ծառայությունները, իսկ համապատասխան սակագների չափով վճարումները իրականացվում են տվյալ թողարկողի կողմից անմիջապես Կենտրոնական դեպոզիտարիային՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխատանքային օրը ներառյալ:
15. Թողարկողի կողմից սույն կանոնների 24.2 և 24.3 կետերով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց ենթակա վճարների ուշացման կամ չկատարման դեպքում Կենտրոնական Դեպոզիտարիան տվյալ թողարկողի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15%-ի չափով:
16. Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից սույն կանոնների 39.1., 39.2 և 44 կետերով սահմանված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է կիսամյակային սկզբունքով, վճարման ենթակա գումարի մի կեսը վճարվում է մինչև տվյալ տարվա հուլիսի 30-ը ներառյալ, իսկ մյուս կեսը մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը ներառյալ:
17. Սույն կանոններով նախատեսված այն սակագները, որոնք չեն ներառում ավելացված արժեքի հարկը, ենթակա են ԱԱՀ-ով հարկման, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք չեն ազատված ԱԱՀ վճարից: Այն դեպքում, երբ սույն կանոններին համապատասխան հաշվարկված գումարները՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև

որոշակի լումաներից, ապա լումաները կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

**18.** Սույն կանոնների 34.3 , 34.5 և 34.6 կետերով սահմանված սակագների գումարները գանձվում են ինչպես արժեթղթեր փոխանցողից, այնպես էլ արժեթղթերը ստացողից, տվյալ աշխատանքային օրվա ընթացքում: Տվյալ աշխատանքային օրը 34.3 , 34.5 և 34.6 կետերով սահմանված ծառայությունների համար Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված դեպքերում արժեթղթերի փոխանցման նպատակով նոր՝ ճշգրտված համապատասխան հանձնարարականների ներկայացման դեպքում լրացուցիչ գումար չի գանձվում: Ընդ որում, եթե տվյալ աշխատանքային օրը «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման գրառում չի կատարվում ռեեստրում, ապա վճարված սակագնի գումարի 50%-ը համապատասխանաբար հետ է վերադարձվում մինչև «Առաքում վճարման դիմաց սկզբունքով արժեթղթերի փոխանցման համար նախատեսված օրվանը հաջորդող հինգերորդ բանկային օրվա վերջը:

**19.** Ծառայությունների մատուցման կասեցումը.

19.1 Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի կասեցնել սույն կանոնների 24.2 և 24.3. կետերով սահմանված ծառայությունների մատուցումը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագիրը հաշվի օպերատորի միջնորդությամբ չվերակնքած այն Թողարկողներին, որոնք Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման մեկ տարուց ավել ժամկետանց պարտավորություն:

19.2 Հաշվի օպերատորը իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումը իր միջնորդությամբ ռեեստրի վարման պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին, եթե վերջիններս հաշվի օպերատորի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավել ժամկետանց պարտավորություն և, եթե հաշվի օպերատորի կանոններով այլ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

19.3 Հաշվի օպերատորը իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումը իր միջնորդությամբ արժեթղթերի պահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող հաշվետերերին, եթե վերջիններս հաշվի օպերատորի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավել ժամկետանց պարտավորություն և, եթե հաշվի օպերատորի կանոններով այլ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

19.4 Հաշվի օպերատորի կողմից սույն կանոնների 19 կետով նախատեսված ծառայության մատուցման կասեցման դեպքում, վերջինս պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Կենտրոնական դեպոզիտարիային, ինչի արդյունքում դադարում է հաշվի օպերատորի կողմից սույն կանոններին համաձայն Դեպոզիտարիային կատարվող վճարների վճարումը կասեցված ծառայությունների ծավալին համապատասխան:

19.5 Սույն կանոնների 19 կետով նախատեսված ծառայությունների կասեցման դեպքում կասեցման պահից դադարեցվում է նաև ծառայությունների դիմաց գանձվող վճարների և տույժերի հաշվարկը:

20. Ծառայությունների սույն կանոնների 19 կետով նախատեսված կասեցման դեպքում Համակարգից տեղեկություններ ստանալու և Թողարկողի արժեթղթերի հաշվետերերի ռեեստրում գործողություններ կատարելու վերաբերյալ Կենտրոնական դեպոզիտարիային և/կամ հաշվի օպերատորին հանձնարարականներ տալու իրավասություն ունեն միայն ՀՀ կենտրոնական բանկը, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատարանները, հետաքննության և նախաքննության մարմինները՝ ՀՀ Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ու դեպքերում և նոտարները:

21. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ հաշվի օպերատորը իրավունք ունեն վերսկսել թողարկողին և հաշվետիրոջը ծառայությունների մատուցումը, այդ թվում վերակնքել ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս այն չվերակնքած թողարկողների հետ հետևյալ դեպքերում.

- 1) սույն կանոնների բանաձև 1-ի համաձայն հաշվարկված պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը ամբողջովին Կենտրոնական դեպոզիտարիային անմիջապես կամ հաշվի օպերատորի միջնորդությամբ վճարելուց հետո՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս վերակնքված չէ.
- 2) սույն կանոնների բանաձև 2-ի համաձայն հաշվարկված պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը հաշվի օպերատորին վճարելուց հետո՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է:
- 3) սույն կանոնների բանաձև 3-ի համաձայն հաշվարկված պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը հաշվի օպերատորին վճարելուց հետո՝ այն դեպքում, եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է:

Հաշվի օպերատորը պարտավոր է Դեպոզիտարիային վճարել սույն կանոնների 19.2 ենթակետի հիման վրա կասեցված ծառայությունների մատուցման վերսկսման դեպքում սույն կանոնների բանաձև 1-ի համաձայն հաշվարկված վճարը՝ ծառայությունների մատուցման վերսկսումից հինգ աշխատանքային օրվա ընթացքում և 19.3 ենթակետի հիման վրա կասեցված ծառայությունների մատուցման վերսկսման դեպքում բանաձև 4-ի համաձայն հաշվարկված վճարը՝ ծառայությունների մատուցման վերսկսումից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

#### Բանաձև 1<sup>1</sup>

<sup>1</sup> *Պարզաբանում պայմանագրի վերսկսման վճարի անհրաժեշտության համար:* Չնայած Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը կասեցնում են ծառայությունների մատուցումը, սակայն շարունակում են պահպանել Թողարկողի հաշվետերերի ռեեստրը, ծառայություններ մատուցել հաշվետերերին, ինչը պահանջում է ռեսուրսներ, այդ թվում ֆինանսական: Բանաձևը նպատակ ունի սահմանել հատուցում Կենտրոնական դեպոզիտարիային և Հաշվի օպերատորին Թողարկողի և հաշվետիրոջ անբարեխղճության հետևանքով պայմանագրի կասեցման, այդ ընթացքում պահպանման, ապա նաև վերսկսման համար կատարված ծախսերի համար:

$\text{Պվվ} = \text{ԺՊ} + \text{ՀԴ} / 365 \times \text{O}$  որտեղ՝

Պվվ - պայմանագրի վերսկսման վճար,

ԺՊ - կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար,

ՀԴ - հիմնական դրույքաչափ, որը կազմում է 150,000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

O - կասեցման օրերի քանակ:

## Բանաձև 2

$\text{Պվվ} = \text{ԺՊ} + \text{ՀԴ} / 365 \times \text{O}$  որտեղ՝

Պվվ - պայմանագրի վերսկսման վճար,

ԺՊ - կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար,

ՀԴ - հիմնական դրույքաչափ, որը կազմում է 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,

O - կասեցման օրերի քանակ:

## Բանաձև 3

$\text{Պվվ} = \text{ԺՊ} + \text{ՀԴ} / 365 \times \text{O}$  որտեղ՝

Պվվ - պայմանագրի վերսկսման վճար,

ԺՊ - կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար,

ՀԴ - հիմնական դրույքաչափ, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.009% (երեւ Հաշվի օպերատորի կողմից այլ ՀԴ սահմանված չէ),

O - կասեցման օրերի քանակ:

## Բանաձև 4

$\text{Պվվ} = \text{ԺՊ} + \text{ՀԴ} / 365 \times \text{O}$  որտեղ՝

Պվվ - պայմանագրի վերսկսման վճար,

ԺՊ - կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար,



ՀԴ – հիմնական դրույքաչափ, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.006%,

Օ – կասեցման օրերի քանակ:

22. Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայություններից օգտվող անձինք Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների մասին կարող են տեղեկանալ Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետ կայքից:

23. Ծառայությունների մատուցման սույն կանոնների 19 կետով նախատեսված կարգով կասեցման ժամանակահատվածում թողարկողի կամ հաշվետիրոջ կողմից օրենքով սահմանված դեպքերում պայմանագիրը լուծելու դեպքում.

1) թողարկողը պարտավոր է մինչև լուծման պահը Կենտրոնական դեպոզիտարիային վճարել բանաձև 1-ի համաձայն հաշվարկված գումարը և մարել Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս վերակնքված չէ.

2) թողարկողը պարտավոր է մինչև լուծման պահը հաշվի օպերատորին վճարել բանաձև 2-ի համաձայն հաշվարկված գումարը և մարել հաշվի օպերատորի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է.

3) հաշվետերը պարտավոր է մինչև լուծման պահը հաշվի օպերատորին վճարել բանաձև 3-ի համաձայն հաշվարկված գումարը և մարել հաշվի օպերատորի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է:

Հաշվի օպերատորը պարտավոր է սույն կանոնների 23 կետի 2) և 3) ենթակետով նախատեսված դեպքում ռեեստրի վարման կամ արժեթղթերի պահառության պայմանագրի լուծման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կոնտրոնական դեպոզիտարիային վճարել համապատասխանաբար բանաձև 1-ի և բանաձև 4-ի համաձայն հաշվարկված գումարը:

23.1 Հաշվի օպերատորը իրավունք ունի թողարկողի և/կամ հաշվետիրոջ կողմից սույն սույն սակագներով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարները անակցեպտ կարգով գանձել թողարկողի և/կամ հաշվետիրոջ Հաշվի օպերատորի մոտ գտնվող այլ դրամային, արտարժույթային կամ դեպոզիտային հաշիվներից:

**ԲԱԺԻՆ 2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Գլուխ 6. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Հաշվի օպերատորի միջնորդությամբ թողարկողին մատուցվող հիմնական ծառայություններ**

**24. Ռեեստրավարման ծառայություններ**

**24.1. Թողարկողի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգ**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Թողարկողի տվյալների գրանցում ծրագրային Համակարգ		Անվճար
Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգ		Անվճար

**24.2. Բաժնետոմսերի (փայերի) ռեեստրի վարում և պահպանում.**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնետոմսերի (փայերի) ռեեստրի վարում և պահպանում	Տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ <sup>2</sup> / ամսական	4 000 ՀՀ դրամ / 1-ից մինչև 49-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ
		6 000 ՀՀ դրամ / 50-ից մինչև 99-ը ներառյալ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ
		8500 ՀՀ դրամ / 100-ից մինչև 199-ը ներառյալ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ
		13000 ՀՀ դրամ / 200-ից մինչև 499-ը ներառյալ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի

<sup>2</sup> Տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ:

հաշիվների (փայտերերի)  
քանակ

16000 ՀՀ դրամ / 500-ից մինչև  
999-ը ներառյալ ներառյալ  
տեղաբաշխված արժեթղթերի  
հաշիվների (փայտերերի)  
քանակ

31000 ՀՀ դրամ / 1000-ից և  
ավելի ներառյալ  
տեղաբաշխված արժեթղթերի  
հաշիվների (փայտերերի)  
քանակ

**24.3. Պարտատոմսերի ռեեստրի վարում և պահպանում<sup>3</sup>**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտատոմսերի ռեեստրի վարում և պահպանում	Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք / ամսական	մինչև 1 550 000 000 ՀՀ դրամը / 0,002%
		1 550 000 000 ՀՀ դրամից ավել / 31 000 ՀՀ դրամ

**24.4. Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում<sup>4</sup>**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
-----------------------	---------	----------

<sup>3</sup> Այն պարտատոմսերի, որոնց անվանական արժեքը արտահայտված է արտարժույթով՝ ռեեստրի վարման և պահպանման սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով:

<sup>4</sup> Այս սակագինը կարող է ավելացվել Հաշվի օպերատորի ցանկությամբ, սակայն ոչ ավել քան 6000 ՀՀ դրամով:

<b>Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերականգնում</b>	<b>Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար/մեկ փոխանցում</b>	<b>5000 ՀՀ դրամ</b>
---	--	---------------------

**25. Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված ծառայություններ (բացառությամբ կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխման)<sup>5</sup>**

**25.1. Բաժնետոմսերի (փայերի) տեղաբաշխման արդյունքում արժեթղթերի փոխանցում (բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)**

<b>Ծառայության անվանումը</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
<b>Բաժնետոմսերի (փայերի) տեղաբաշխում</b>	<b>տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի)<sup>6</sup> ընդհանուր անվանական արժեք</b>	<b>մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%</b>
		<b>3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ</b>

**25.2. Պարտատոմսերի տեղաբաշխում (բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)<sup>7</sup>**

<b>Ծառայության անվանումը</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
<b>Պարտատոմսերի տեղաբաշխում</b>	<b>տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք</b>	<b>մինչև 30 000 000 000 ՀՀ դրամը / 0,005%</b>
		<b>30 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ</b>

<sup>5</sup> Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված ծառայությունների սակագինը տեղաբաշխման գործընթացի վերջում վերահաշվարկվում ընդհանուրի սկզբունքով:

<sup>6</sup> Փայերի դեպքում հիմք է ընդունվում ոչ թե անվանական արժեքը, այլ փայերի շուկայական արժեքը:

<sup>7</sup> Այն պարտատոմսերի, որոնց անվանական արժեքը արտահայտված է արտարժույթով՝ սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ տեղաբաշխման գրանցման օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով:

**25.3. Բաժնետոմսերի (փայերի) հրապարակային տեղաբաշխում**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնետոմսերի (փայերի) հրապարակային տեղաբաշխում	տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 1 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		1 000 000 000 ՀՀ դրամից ավել / 500 000 ՀՀ դրամ

**25.4. Պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում	տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 4 000 000 000 ՀՀ դրամը / 0,005%
		4 000 000 000 ՀՀ դրամից ավել / 200 000 ՀՀ դրամ

**26. Թողարկողի կորպորատիվ գործողությամբ պայմանավորված ծառայություններ**

**26.1. Կորպորատիվ գործողության գրանցում<sup>8</sup>**

Ծառայության անվանումը	Միավորը	սակագինը
Կորպորատիվ գործողության գրանցում	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք <sup>9</sup>	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ
Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում	Հաշիվ	Անվճար

<sup>8</sup> Սույն կետում ներառված կորպորատիվ ծառայությունները ներառում են կանոնադրական կապիտալի ավելացում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ և կանոնադրական կապիտալի նվազեցում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման) արդյունքում արժեթղթերի փոխարկում այլ արժեթղթերով, արժեթղթերի համախմբում (կոնսոլիդացիա), արժեթղթերի բաժանում, թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկում մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերով, արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերում, հետգնում և մարում:

<sup>9</sup> Արժեթղթերի փոխարկման դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:

27. Թողարկողի հարցման հիման վրա տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններ

27.1. Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում	ցուցակ	Անվճար

27.2. Արժեթղթերով (փայերի) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի /առանց հիմքերի / տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Առձեռն	1 Տեղեկանքը	7000 ՀՀ դրամ

27.3. Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Էլեկտրոնային եղանակով	1 տեղեկանքը	10 000 ՀՀ դրամ
առձեռն		15 000 ՀՀ դրամ

28. Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների գրանցում Համակարգում<sup>10</sup>

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Տվյալների փոփոխության մուտքագրում Համակարգ		Անվճար

<sup>10</sup> Թողարկողի տվյալների փոփոխությունը ներառում է թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխության (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը) :

**Գլուխ 7. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Հաշվի օպերատորի միջնորդությամբ թողարկողին մատուցվող լրացուցիչ ծառայություններ**

**29. Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում**

<b>Ծառայության անվանումը</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
<b>Շահութաբաժինների հաշվարկում և վճարում</b>	<b>Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար / յուրաքնայուր գործընթացի համար</b>	<b>0,1 %</b>

**30. Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում**

<b>Ծառայության անվանումը</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
<b>Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում</b>	<b>Վճարված/բաշխված դրամական միջոցների գումարը / յուրաքնայուր գործընթացի համար</b>	<b>0,01 %</b>

**31. Ծանուցում թողարկողին արժեթղթերի (փայերի) շարժի մասին (արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և գրավի հիմքով արգելադրման վերաբերյալ )**

<b>Ծառայության անվանումը</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
<b>Ծանուցում</b>	<b>տարեկան</b>	<b>150 000 ՀՀ դրամ</b>

**32. Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում**

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Հսկողության իրականացում	տարեկան	500 000 ՀՀ դրամ

**ԲԱԺԻՆ 3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Գլուխ 8. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Հաշվի օպերատորի միջնորդությամբ հաշվետերերին մատուցվող հիմնական ծառայություններ**

33. Գրանցված սեփականատերերի արժեթղթերի հաշիվների պահպանման հետ կապված ծառայություններ

33.1. Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		
Արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված արժեթղթերի) հաշվի պահպանում <sup>11</sup>	Յուրաքանչյուր ամսվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեք / ամսական	0,0005 %
Արժեթղթերի հաշվի փակում		Անվճար

34. Կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ

34.1. Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում ցանկացած հիմքով, ներառյալ «Ազատ առաքում» սկզբունքով<sup>12</sup>

<sup>11</sup> Այս ծառայության դիմաց սակագնի հաշվարկումը սկսվում է Հաշվի օպերատորի կողմից հաշվետիրոջ հաշվի վերաբացման կամ բացման պահից և հաշվարկվում է մինչև տվյալ հաշվի փակման օրը ներառյալ:

<sup>12</sup> Ներառում է բաժնետոմսերով առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին:



Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնետոմսերի (փայերի) (FOP) փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք/վճարում է փոխանցող կողմը	մինչև 1 000 000 ՀՀ դրամը / 500 ՀՀ դրամ
		1 000 000 ՀՀ դրամից մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ

34.2. Պարտատոմսերի փոխանցում ցանկացած հիմքով ներառյալ «Ազատ առաքում» սկզբունքով<sup>13</sup>

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտատոմսերի (FOP) փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք /վճարում է փոխանցող կողմը	մինչև 2 000 000 ՀՀ դրամը / 100 ՀՀ դրամ
		2 000 000 ՀՀ դրամից մինչև 4 000 000 000 ՀՀ դրամը / 0,005%
		4 000 000 000 ՀՀ դրամից ավել / 200 000 ՀՀ դրամ

34.3. Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ հաշվից մյուսին

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Հանձնարարագիր/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	4 500 ՀՀ դրամ

<sup>13</sup> Ներառում է պարտատոմսերով առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին

34.4. Պորտֆելի փոխանցում՝ մեկ հաշվի օպերատորի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցում <sup>14</sup>

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պորտֆելի փոխանցում	Հանձնարարագիր/վճարումը իրականացնում է փոխանցող կողմը	5 000 ՀՀ դրամ

34.5. Բաժնետոմսերի փոխանցում "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով ցանկացած հիմքով

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Բաժնետոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 1 000 000 000 ՀՀ դրամը/ 1 000 ՀՀ դրամ
		1 000 000 մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը / 0,1%
		2 000 000 000 ՀՀ դրամից ավել / 2 000 000 ՀՀ դրամ

34.6. Պարտատոմսերի փոխանցում "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով ցանկացած հիմքով

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Պարտատոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/	Մինչև 10 000 000 ՀՀ դրամը/ 1 000 ՀՀ դրամ
		10 000 000 մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը /

<sup>14</sup> Այս սակագինը կարող է ավելացվել հաշվի օպերատորի կողմից, սակայն ոչ ավել քան 6000 ՀՀ դրամով:

	վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	0,01%
		2 000 000 000 ՀՀ դրամից ավել / 200 000 ՀՀ դրամ

34.7. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/ վճարումը իրականացնում է գրավառուն	Մինչև 140 000 000 ՀՀ դրամը/ 0,15 % ՀՀ դրամ
		140 000 000 ՀՀ դրամից ավել / 210 000 ՀՀ դրամ

35. Արժեթղթերի գրավադրման, սառեցման, առևտրային արգելադրման, ինչպես նաև  
ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ

35.1. Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ  
հաշվետիրոջ անձնական հաշվում արժեթղթերի գրավադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Գրավադրում	Գրավի առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ

35.2. Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման  
վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
--------------------------	---------	----------

Սառեցում	Սառեցված արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է հաշվետերը	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ

35.3. Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Առևտրային արգելադրում		Անվճար

35.4. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում	Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0,25 %

35.5. Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում		Անվճար

**36. Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրում**

36.1. Արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում (այդ թվում՝ ըստ յուրաքանչյուր դասի (ռեեստրից քաղվածք))	քաղվածք	Անվճար
Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	տեղեկանք	Անվճար

36.2. Հաշվետիրոջ հարցման հիման վրա այլ տեղեկությունների (բացառությամբ գործարքների վերաբերյալ տեղեկությունների հարցումների) վերաբերյալ ռեեստրից կամ անձնական հաշվից տեղեկանքի հիմքերով տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Էլեկտրոնային եղանակով	տեղեկանք	3 000 ՀՀ դրամ
Առձեռն		6 000 ՀՀ դրամ

**37. Անվանատիրոջ հաշիվների բացման և պահպանման հետ կապված ծառայություններ**

37.1. Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և պահպանում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	200 000 ՀՀ դրամ
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
Անվանատիրոջ հաշվի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ	0,0005%

հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեք / ամսական

37.2. Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և պահպանում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Անվանատիրոջ հաշվի բացում		Անվճար
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
Անվանատիրոջ հաշվի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեք / ամսական	0,0005%

**ԲԱԺԻՆ 4. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Գլուխ 9. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից առանց հաշվի օպերատորի միջնորդության մատուցվող հիմնական ծառայություններ

38. Համակարգի սպասարկման հետ կապված ծառայություններ<sup>15</sup>

38.1. Հաշվի օպերատորի կարգավիճակի շնորհում և սպասարկում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Շնորհում	մեկ անգամ	60 000 ՀՀ դրամ
Սպասարկման	ամսական	10 000 ՀՀ դրամ

<sup>15</sup> Այս բաժնում ներառված ծառայությունների սակագները փոփոխության ենթակա չեն:

անդամավճար

38.2. Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակի շնորհում և սպասարկում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Շնորհում	Մեկ անգամ	40 000 ՀՀ դրամ
Սպասարկման անդամավճար	ամսական	10 000 ՀՀ դրամ

38.3. Հաշվի օպերատորին հաղորդագրությունների ուղարկում SWIFT համակարգի միջոցով

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
SWIFT համակարգի միջոցով հաղորդագրությունների ուղարկում	Հաղորդագրություն	700 ՀՀ դրամ

39. Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում քլիրինգի և վերջնահաշվարկի հետ կապված ծառայություններ

39.1. Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների որոշում և դրանց հաշվանցում (քլիրինգ)

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Քլիրինգ	Կարգավորվող շուկայի օպերատոր/ տարեկան	1 000 000 ՀՀ դրամ

39.2. Կարգավորվող շուկայում կնքված գործարքների առարկա արժեթղթերի և դրամական միջոցների վերջնահաշվարկ

Ծառայության

Միավորը

Սակագինը

<b>անվանումը</b>		
<b>Վերջնահաշվարկ</b>	<b>Կարգավորվող շուկայի օպերատոր/ տարեկան</b>	<b>1 000 000 ՀՀ դրամ</b>

40. Արժեթղթերի փոխանցում դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա , երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան է

<b>Ծառայության անվանումը</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
<b>Դատարանի որոշման հիման վրա արժեթղթերի փոխանցում</b>		<b>Անվճար</b>

41. Օրենքով և արժեթղթերի շուկան կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված անձանց շրջանակներից դուրս այլ անձանց կողմից ներկայացված հարցումների վերաբերյալ պատասխանի ներկայացում

<b>Ծառայության անվանումը</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
<b>Հարցման պատասխանի տրամադրում</b>	<b>Հարցում</b>	<b>15 000 ՀՀ դրամ</b>

42. Արժեթղթերի սառեցման գրանցման հետ կապված ծառայություններ

42.1. Դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնի համապատասխան որոշման հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում

<b>Ծառայության անվանումը</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
<b>արժեթղթերի սառեցում</b>		<b>Անվճար</b>

42.2. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ հիմքերով արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում<sup>16</sup>

<b>Ծառայության</b>	<b>Միավորը</b>	<b>Սակագինը</b>
--------------------	----------------	-----------------

<sup>16</sup> եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով վճարման այլ պայման նախատեսված չէ:



անվանումը		
Սառեցում	Սառեցված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,05%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 1 500 000 ՀՀ դրամ

#### 43. Արժեթղթերի ծածկագրերի շնորհում

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
ԱՄՏԾ-ի և CFI ծածկագրերի շնորհում այն արժեթղթերի համար, որոնց ռեեստրը վարվում է Դեպոզիտարիայում	Ծածկագիր/մեկ անգամ	Անվճար
ԱՆԾ-ի շնորհում		Անվճար
ԱՄՏԾ-ի և CFI ծածկագրերի շնորհում այն արժեթղթերի համար, որոնց ռեեստրը հանձնված չէ Դեպոզիտարիային		100 000 ՀՀ դրամ

Գլուխ 10. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից առանց հաշվի օպերատորի միջնորդության մատուցվող լրացուցիչ ծառայություններ

#### 44. Ժամկետային վարկային ռեսուրսների առևտրի սահմանաչափերի հաշվարկում, տրամադրում և քլիրինգ

Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
Սահմանաչափերի որոշում և քլիրինգ	Կարգավորվող շուկայի օպերատոր/ տարեկան	1 500 000 ՀՀ դրամ

#### 45. Գույքի գրավով ապահովված արժեթղթերի պահպանում

Ծառայության	Միավորը	Սակագինը
-------------	---------	----------

<b>անվանումը</b>		
<b>Արժեթղթերի պահպանում</b>	<b>Թողարկված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/յուր. թողարկման համար տարեկան</b>	<b>0,5%</b>

**ԲԱԺԻՆ 5. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Գլուխ 11. Կանոններն ուժի մեջ մտնելը**

46. Սույն կանոնները հաստատվում են Կենտրոնական Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցումից հետո օրենքով սահմանված կարգով:

47. Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Կենտրոնական Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցումից հետո օրենքով սահմանված կարգով:

48. Սույն կանոններով սահմանված ծառայությունների սակագների յուրաքանչյուր փոփոխության դեպքում Կենտրոնական Դեպոզիտարիան պարտավոր է այդ մասին պատշաճ ծանուցել իր հետ ռեեստրի վարման պայմանագրային հարաբերություններում գտնվող բոլոր թողարկողներին, ինչպես նաև արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամներին: Պատշաճ է համարվում իր ինտերնետային կայքում կատարված փոփոխության և/կամ լրացման կամ նոր խմբագրությամբ կանոնների տեղադրումը, ինչպես նաև Կենտրոնական Դեպոզիտարիայի գործունեության վայրում վերոնշյալ կանոնների հրապարակումը:

**Հաստատված է**

**«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ  
դիտորդ խորհրդի որոշմամբ**

\_\_\_\_\_ **Կոնստանտին Սարոյան**

**«01»փետրվարի 2013թ.  
ք. Երևան**

